Կազմված է համայնքի ավագանու 118-Ա որոշմամբ Տպագրված է ընդամենը 2 օրինակից

Օրինակ 1

Բաղկացած է 10 թերթից

ՀԱՍՏԱՏՎԱԾ է
Հայաստանի Հանրապետության
ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
Արարատի մարզի Վեդի
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ԳՐԱՆՑՎԱԾ է
ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ

ԿՈՂՄԻՑ «--» --- ------թ.

համայնքի ավագանու
29.07.2022թ. թիվ 118-Ա որոշմամբ

գրանցման թիվը՝ N----------

Վեդի համայնքի ղեկավար՝
գրանցված կանոնադրության
_____Գ.Սարգսյան

--. --.. ---------թ.

թիվ -----փոփոխությունը գրանցված է ՀՀ
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի գործակալության կողմից
«——» ————————— 2022թ.

_____ _____

«ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

/նորխմբագրություամբ/

Ք.ՎԵԴԻ -2022թ.

1.ԸՆԴՀԱՆՈՒՐԴՐՈՒՅԹՆԵՐ

1 «Վեդի համայնքի կոմունալ ծառայությունն»

համայնքային բյուջետային /այսուհետ՝ հիմնարկ/ ստեղծվել է համայնքի ավագանու 19.12.2002թ.-ի թիվ 2 որոշման համաձայն: Համայնքի /այսուհետև հիմնադիր/ անունից հանդես է կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքն է, որի անունից հանդես է գալիս համայնքի ղեկավարը:

2.Հիմնարկը իրավաբանական անձ չէ, ունի իր անվամբ կնիք, դրոշմակնիք, գանձապետական հաշիվ և այլ ատրիբուտներ:

3. Հիմնարկի ստեղծման նպատակն է նպաստել համայնքի սոցիալ տնտեսական կյանքի զարգացմանը,բնակչության կենսաապահովման խնդիրների լուծման նպատակային ծառայությունների մատուցումը:

4. Հիմնարկի ֆինանսավորումը իրականացվում է համայնքի բյուջեից ավագանու կողմից հաստատված ծախսերի նախահաշվի շրջանակներում:

5. հիմնարկը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքով, ավագանու ,համայնքի ղեկավարի որոշումներով և սույն կանոնադրությամբ:

6. հիմնարկի պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում համայնքը, հիմնարկը ենթակա և հաշվառում է միայն հիմնադրին:

7. Հիմնարկի հասցեն է.ք.Վեդի,Թումանյան 3:

2.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

2.1 Հիմնարկի ստեղծման նպատակն է Արարատի մարզի Վեդի համայնքի բնակչության կենսաապահովման խնդիրները լուծելու նպատակով մատուցվող ծառայությունների, շին. մոնտաժային, վերանորոգման և հարդարման, կանաչապատման, բարեկարգման, գերեզմանատների գործունեության կանոնակարգման և նրանց պահպանման աշխատանքների հարկահավաքման աշխատանքների և աբոնենտային վճարների գանձման կազմակերպելը: Մինչև համաուորությունների ստեղծումը զբաղվել բազմահարկ շենքերի սպասարկման և դրանց դիմաց վարձավճարների գանձմամբ:

2.2 Հիմնարկը իր խնդիրների և նպատակների կատարման համար կարող է իրականացնել նաև օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված սույն կանոնադրությանը և օրենքին չհակասող գործունեության այլ տեսակների հիմնադրի թույլտվությամբ:

3.ՀԻՄՆԱՐԿԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3.1 Հիմնարկը իր գործունեությունն իրականացնում է աշխատանքային ծրագրերով հաստատված ծախսերի նախահաշվի համապատասխան, որոնք կազմված են յուրաքանչյուր տարվա համար համայնքի ղեկավարի կողմից սահմանված կարգով, որը հաստատվում է ավագանու կողմից:

3.2 Հիմնարկը իր վրա դրված խնդիրները լուծում է հիմնադրի կողմից և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում:

3.3 Հիմնարկը օրենսդրությամբ և հիմնադրի կողմից սահմանված կարգի շրջանակներում իր գործունեության նպատակների համար, սահմանված կարգով, իրեն ամրացված գույքը տիրապետում, օգտագործում և տնօրինում է:

3.4Օրենքով և հիմնադրի կողմից սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնում է հաշվապահական և ֆինանսական հաշվետվություններ:

3.5Հիմնադրի կառավարումն իրականացնում են հիմնադիրը և հիմնարկի տնօրենը:

3.6Հիմնարկի գործունեության ու կառավարմանը վերաբերվող ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը պատկանում է հիմնադրին:

3.7Հիմնադրի բացառիկ իրավասության հարցերն են՝

ա/ հիմնարկի վերակազմակերպման և գործունեության դադարեցումը

բ/ հիմնարկի կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը

գ/հիմնարկին ամրացվող և օգտագործման հանձնվող գույքի կազմի և չափի որոշումը

դ/օրենքին,իրավական այլ ակտերին համապատասխան հիմնարկի տնօրենի նշանակումը և ազատումը

ե/ հիմնարկի կառուցվածքի և հաստիքացուցակի հաստատումը

3.8Հիմնադիրը իրականացնում է հիմնարկի գործունեության ընթացիկ վերահսկողությունը

ա/ կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հիմնարկի տնօրենի օրենքների պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները և ցուցումները, լսում է հիմնարկի գործունեության ստուգման արդյունքները , հաստատում է հիմնարկի հաշվետվությունները:

3.9 Հիմնարկի տնօրենը գործում է սույն կանոնադրությամբ, հիմնադրի կողմից իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում, ինչպես նաև օրենքով և իրավական այլ ակտերով:

3.10Հիմնարկի տնօրենը

ա կազմակերպում և ղեկավարում է հիմնարկի գործունեությունը
բ պատասխանատվություն է կրում հիմնարկին հանձնված շարժական և անշարժ գույքի, հիմնական և շրջանառու միջոցների պահպանման համար
դ/Իրլիազորություններին շրջանակում աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում հիմնարկի աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ, նշանակում կարգապահական տույժեր, արձակում հրամաններ, տալիս պարտադիր կատարման ցուցումներ
ե/ սահմանում է հիմնարկի աշխատանքների հաստիքացուցակը և ծախսերի նախահաշիվը, դրանք ներկայացնում հիմնադրի հաստատմանը
է/իրականացնում է հիմնադրի կողմից սահմանված կամ արտոնված այլ լիազորություններ:
3 11 Տնօրենի բացակայության ժամանակ, նրա պարտականությունները կատարում է տեղակալը կամ հիմնադրի կողմից լիազորված այլ պաշտոնակատար անձը:

4.ՀԻՄՆԱՐԿԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

4.1 Հիմնարկի գույքային միջոցները գոյանում է հիմնադրի կողմից նրան ամրացված կամ օգտագործման հանձնված գույքից ինչպես նաև ծախսերի նախահաշվում նախատեսված միջոցներով ձեռքբերված գույքը:
4.2Հիմնարկը իրավունք ունի օրենքներով, իրավական այլ ակտերով և իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներով օգտագործելու, տիրապետելու իրեն ամրացված գույքը ըստ նշանակության և պատասխանատու է գույքի պահպանման և արդյունավետ օգտագործման համար:
4.3Հիմնարկը իրավունք չունի իրեն ամրացված կամ օգտագործման հանձնված գույքը օտարել, գրավ դնել, հանձնել վարձակալության առանց հիմնադրի թույլտվության:
4.4Հիմնարկի պարտավորությունների համար հիմնարկը պատասխանատվություն է կրում իր գույքով:
4.5Հիմնարկի ողջ գույքը սեփականության իրավունքով պատկանում է հիմնադրին:

5.ՀԻՄՆԱՐԿԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

5.1Հիմնարկի ֆինանսական միջոցները գոյանում են հիմնադիր բյուջետային հատկացումներից, բնակչության կենսաապահովման խնդիրները լուծելու նպատակով մատուցվող ծառայություններից գանձվող վճարներից, որոնց չափը համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի ավագանին և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներից:

5.2 Հիմնարկը կարող է ունենալ արտաբյուջետային միջոցներ որոնք ներառվում են ոչ պետական աղբյուրներից տրամադրված անվերադարձ և չփոխհատուցվող ֆինանսական միջոցներ ու բնաիրային հատկացումներ,նվիրատվություններ ու բարեգործական այլ հատկացումներ:

5.3 Հիմնարկի հատկացված ֆինանսական միջոցները ծախսվում են հաստատված նախահաշվի հիման վրա:

5.4 Հիմնարկի կոցմից հավաքագրված հարկերը,տուրքերը, սպասարկման վճարները և այլ մուտքերի ամբողջովին մուտքագրվում է համայնքային բյուջե:

5.5 Հիմնարկի ֆինանսական գործունեության հսկողությունը իրականացվում է հիմնադրի կողմից:

5.6 Հիմնարկի ֆինանսատնտեսական գործունեության տարեկան հաշվետվությունը հաստատվում է հիմնադրի կողմից:

6.ՀԻՄՆԱՐԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

6.1 Հիմնարկի գործունեությունը դադարում է հիմնադրի որոշմամբ և օրենքով նախատեսված դեպքերում:

6.2 Հիմնարկի գործունեությունը դադարելու դեպքում հիմնարկի գույքն ու ֆինանսական միջոցները ամցնում են հիմնադրի տնօրինմանը: